



ԵՐԿՐՈՇԱԲԹԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 145

ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ

Պիտի փառաբանեմ քեզ, իմ Թագաւոր Աստուածս,
 քու անունդ պիտի օրհնաբանեմ յաւիտեանէ յաւիտեան:
 Մեծ է Տէրը, եւ ամէն օրհներգութեան արժանի.
 անչափելի է անոր մեծութիւնը:
 Բարեգութ եւ ողորմած է Տէրը, համբերատար եւ սիրով լեցուն:
 Տէր, քու բոլոր արարածներդ գոհութիւն պիտի յայտնեն քեզի,
 եւ քեզի հաւատարիմ մարդիկը քեզ պիտի օրհնաբանեն:
 Քու Թագաւորութեանդ փառքը պիտի նկարագրեն,
 եւ գորութիւնդ պիտի պատմեն,
 որպէսզի ամբողջ մարդկութեան ծանուցանեն հզօր գործերդ
 եւ Թագաւորութեանդ մեծափայելուչ փառքը:
 Տէրը հաւատարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,
 նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:
 Տէրը նեցուկ կը կանգնի անոնց՝ որոնք իյնալու վրայ են,
 եւ ոտքի կը կանգնէ բոլոր գլորածները:
 Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,
 բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:
 Անիկա իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,
 անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենասուբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
 Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Զրիստոս,
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
 ի ննջել եւ ի յանել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ
ԾՆՆԴՈՑ 20 ԳԼԽ

ԱՐԲԱՂԱՍ ԵՒ ԱՐԻՄԵԼԷՔ (20:1-18)

Հեղափոխական հասարակությունը մըն է, թեև երեսօթապետ կրկնություն, սակայն խորքին մէջ ունի հոգեւոր դաս եւ ճշմարտություն:

Այս հասարակությունը մէջ կը հանդիպինք հետեւեալ ճշմարտություններու.-

1. Արքայազնի չուրը, արեղէ արեղ փոխադրուիլը, պանդուխտ ըլլալը:
2. Արքայազն իր հաւաքը կը փոխանցէ նաեւ ուրիշներու:
3. Սարան որպէս խորհրդանիշ առաքինութեան:
4. Աստուծոյ հաւաքարմութիւնը փրկում խոստումին, միջամտութիւնը եւ նախախնամութիւնը, հակառակ փրկող կացութեան:

Առաջին իսկ պահէն սկսեալ, երբ Աստուծոյ կանչեց Արքայազնը ըսելով. «*Քու երկրէդ, եւ քու ազգականներէդ ու քու հօրդ քունէն գնա այն երկիրը, որ ես քեզի պիտի ցուցնեմ*», Արքայազնը դարձաւ պանդուխտ, մէկ արեղէն միւս արեղ: Սա ցոյց կու տայ նաեւ իւրաքանչիւր հաւաքացեալի կեանքը, որ ինք եւս պանդուխտ է այս աշխարհի վրայ, մինչեւ հասնի «խոստացում երկիր»՝ «անձեռագործ հայրենիք», յաւիտենական կեանք: Սա կը նշանակէ, թէ այս երկրաւոր կեանքը՝ ժամանակաւոր մնայուն արեղ է: Միւս կողմէ, Աստուծոյ նաեւ յարուց ծրագիր մը ունի, որ Արքայազն իր պանդուխտութեամբ առաւել եւս զօրացնէ իր հաւաքը ու հաւաքարմութիւնը Աստուծոյ նկատմամբ, եւ ոչ թէ դժգոհի: Նաեւ այս պանդուխտութիւնը առիթ է որ Արքայազն իր ունեցած հաւաքը ու հաւաքարմութիւնը կիսէ ուրիշներու հետ, որպէսզի անոնք եւս ճանչնան ճշմարիտ Աստուծոյ: Արքայազն այս բոլորը կարարեց առանց փրկունջի, ընդհակառակը, ամենայն հաւաքարմութեամբ, ոչ միայն արեղէ արեղ չուր, այլ անոնց հետ մէկտեղ նաեւ փորձություններու հանդիպելու:

Ինչպէս Փառաւորի պարագային, այս պարագային եւս Արքայազն Սարան ներկայացուց որպէս քոյրը: Հոգեւոր իմաստով Սարան նաեւ խորհրդանիշ է առաքինութեան: Եթէ երբեք Սարան որպէս առաքինութիւն ներկայացուի որպէս կինը, ուրեմն ոչ ոք կրնայ օգտուիլ անկէ, իսկ եթէ երբեք ներկայացուց որպէս քոյրը, այս պարագային ուրիշներ կրնան օգտուիլ այդ առաքինութենէն: Ինչպէս Առակաց գիրքը պիտի ըսէ. «Իմաստութեան ըսէ. դուն իմ քոյրս ես» (7:4):

Տարբերութիւնը, սակայն, Փառաւորին եւ Արիմելէքին, Փառաւորի պարագային ուզեց Սարան ունենալ ոչ մաքուր ու անկեղծ սրտով, մինչ Արիմելէքի պարագային մաքուր եւ անկեղծ սրտով «*Ես այս բանը ուղիղ սրտով եւ մաքուր ձեռքերով ըրի*» (20:5):

Ահա այս կացութեան մէջ Տէրը կը միջամտէ, անով ցոյց տալու Իր հաւաքարմութիւնը փրկում խոստումին եւ նախախնամութիւնը հանդէպ իրենիներուն: Աստուծոյ ծրագրած է Արքայազնին սերունդ պարգեւել Սարայի միջոցաւ, որպէս խոստումի զաւակ, եւ այդ սերունդէն պիտի ծնէր Քրիստոսը: Աստուծոյ երբեք չ'արտօներ որեւէ մէկ խոչընդոտ, Իր ծրագիրը ձախողցնելու միտող, որովհետեւ Աստուծոյ ոչ միայն արարիչն է աշխարհի, այլ Տէր եւ նախախնամող: Մենք յաճախ այնպէս մը կը կարծենք, որ պարմութիւնը սովորական ընթացք մըն է, սակայն խորքին մէջ Աստուծոյ ղեկավարութիւնը կայ, պարմութեան սանձը Իր ձեռքին մէջն է: Որքան ալ մեղաւոր ու ապականեալ թուի, նոյնիսկ անարդար ղեկավարներ ըլլան, սակայն Աստուծոյ նախախնամութիւնը չի դադրիր մարդուն դէպի փրկութիւն առաջնորդելու, եւ առանց իր կամքին ոչինչ կը պարահի: Յաճախ կայ այն փրամադրութիւնը որ աշխարհը դէպի չար կ'ուղղուի, եւ մարդն է այդ բոլորին դերակապարը, այս բոլորի ետին կայ, սակայն, Աստուծոյ խորհրդաւոր գործելակերպը, որ վերջ ի վերջոյ ամէն ինչ արեղի կ'ունենայ Աստուծոյ կամքին համաձայն: Ինչպէ՛ս: Առնենք Յովսէփի օրինակը, երբ իր եղբայրները ծախեցին զինք, կարծելով թէ չարիք կ'ընեն, սակայն խորքին մէջ Աստուծոյ անոնց փրկութիւնը կը պարարաստէր:

Հեղափոխական է, որ Արիմելէք ի՛նչ քսած էր իննսուն ամեայ ծերունի կնոջ մէջ, որ ուզած էր զայն կնութեան առնել: Բայց անոր մօտեցումը ուղիղ սրտով եւ մաքուր ձեռքերով էր: Ահա այս իսկ պարմառով Աստուծոյ նաեւ Արքայազնի աղօթքովը բժշկութիւն շնորհեց անոր, ու անոր կնոջ եւ աղախիններուն եւ անոնց սկսան ծնանիլ:

Միւս կողմէ, եթէ երբեք Սարան առաքինութիւն կը խորհրդանշէ, եւ Արիմելէք մաքուր սրտով կ'ուզէ ունենալ կամ մօտենալ, ինչո՞ւ Տէրը կ'արգիլէ: Որովհետեւ եթէ երբեք Արիմելէքը հեթանոսները կը խորհրդանշէ, ուրեմն այդ շնորհքը պիտի փոխանցուի ոչ թէ Արքայազնի ճամբով, այլ՝ Քրիստոսի: Ուրեմն փակաւին ժամանակ կայ:

Այս բոլորը արեղի կ'ունենան, որպէսզի անով ցոյց տրուի Արիմելէքի աստուածավախութիւնը, այլապէս՝ յանձն կ'առնէր պայանն Արքայազնը եւ կնութեան վերցնէր Սարան: Աւարտին, Սարան, որպէս առաքինութիւն, մնաց Արքայազնի հետ, մինչեւ որ ժամանակը գայ, որպէսզի Քրիստոսով փոխանցուի աստուածային առաքինութիւնները հեթանոսներուն: